ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

<< Արթիկի պետական քոլեջ>> ՊՈԱԿ

Հաստատում եմ _____ Հ.Ալեքսանյան

Արթիկի պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

<< >>_____2023թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Որակի ներքին ապահովման կենտրոնի

Արթիկ 2023թ.

1. Ընդհանուր դրույթներ

1. 1. Կենտրոնը ստեղծվում, վերակազմավորվում է կամ նրա գործունեությունը դադարեցվում է ԱՊՔ տնօրինական խորհրդի որոշմամբ և տնօրենի հրամանով:

1.2. Կենտրոնի ղեկավարը և աշխատակիցները նշանակվում կամ ազատվում են աշխատանքից տնօրենի հրամանով՝ ըստ գործող աշխատանքային օրենսդրության:

1.3. Կենտրոնի աշխատանքներն իրականացվում են քոլեջի տնօրենի և ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ:

1.4. Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել որակի ներքին ապահովման կենտրոնի առաջարկությամբ՝ քոլեջի տնօրենի հրամանով:

2. Կենտրոնի նպատակը և խնդիրները

2.1. Կենտրոնի նպատակն է կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացի գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը:

2.2. Կենտրոնի խնդիրներն են՝

- Քոլեջում ձևավորել և արմատավորել որակի ապահովման մշակույթ

- Ապահովել կրթական ծրագրերի և դրանց իրականացման գործընթացների որակի ապահովման ընթացակարգերի ստեղծումը մշտադիտարկումը և շարունակական բարելավումը:

- Ապահովել կրթական որակի ապահովման չափորոշիչներին համապատասխան օրինակելի փորձի բացահայտումն ու տարածումը քոլեջում:

- Ապահովել քոլեջի հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

3. Կենտրոնի գործառույթների

3.1. Քոլեջում մշակել որակի ապահովման քաղաքականություն և համակարգ, ներդրման համապատասխան միջոցներ, գործիքներ:

3.2. Հավաքագրել, համակարգել և մշակել քոլեջում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

3.3. Իրականացնել քոլեջի ինստիտուցիոնալ ինքնագնահատման և վերլուծության կազմակերպում:

3.4. Պարբերաբար իրականացնել հետազոտություններ (որակական, քանակական) քոլեջում որակի ապահովման շրջանակներում՝ արդյունքներ հասանելի դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին:

3.5. Համագործակցել քոլեջի ստորաբաժանումների և ուսանողների հետ՝ որակի ապահովման գործառույթներն իրականացնելիս:

3.6. Համագործակցել որակի արտաքին գնահատումն իրականացնող կառույցների հետ:

4. Կենտրոնի կառուցվածքն ու կառավարումը

4.1. Որակի ներքին ապահովման կենտրոնը կազմված է ղեկավարից, աշխատանքային և ուսանողական խմբերից, անհրաժեշտության դեպքում նաև ժամանակավոր խմբերից:

4.2. Որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավարի գործառույթներն են՝

- Ղեկավարել և վերահսկել կենտրոնի աշխատանքները:
- Պատասխանատվություն կրել կենտրոնի որակի և նրա առջև դրված գործառույթների իրականացման համար:
- Մշակել ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմներ ու համապատասխան փաստաթղթեր:

4.3. Կազմակերպել և իրականացնել քոլեջի նախնական ինքնավերլուծություն:

4.4. Ձևավորել որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական շարժում:

4.5. Աշխատանքային խմբերը կազմվում են առարկայական ամբիոնների, ղեկավարների դասախոսների մասնակցությամբ:

4.6. Աշխատանքային խմբերի գործառույթներն են՝

- Կազմակերպել քոլեջի գործունեության, ուսումնական գործընթացների գնահատման վերաբերյալ հարցումներ, վերլուծել դրանց արդյունքները:
- Ցուցաբերել մեթոդական օգնության դասախոսական կազմին:

. Վերանայել քոլեջի ներքին կարգերը և համապատասխանեցնել գործող չափանիշներին, հետևել դրանց իրագործման ընթացքին:

4.7. Ուսանողական խումբը բաղկացած է խմբի նախագահից և յուրաքանչյուր մասնագիտության մեկ ուսանողից:

4.8. Ուսանողական խմբի գործառույթներն են՝

. Ծանոթացնել ուսանողներին իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններից:

. Կազմակերպել ուսանողական քննարկումներ ուսանողական խորհրդի հետ՝ բացահայտելու կրթության որակի հետ կապված խնդիրներ, որակի ապահովման կենտրոնին ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

. Աջակցել մշտադիտարկման մեթոդիկայի մշակմանը:

Արթիկի պետական քոլեջի տնօրեն՝ Ա. Ղուլիջողլյան